

ԲԱՖԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գանձասարի վանքը գտնվում է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Վանք գյուղից արևմուտք, Խաչենագետի ձախ ափին:

- Համաձայն մատենագիտական տեղեկությունների և վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ տաճարի ներքին հյուսիսային պատի վրա պահպանված արձանագրության, այն կառուցվել է 1216—1238 թվականների ընթացքում, Խաչենի ինքնակալ իշխան Հասան Ջալալի կողմից: Մեծահանդես օծվել է 1240 թվականին¹: Ըստ մի այլ արձանագրության, որ կա գավթի ներքին արևելյան պատին, այն հիմնադրվել է եկեղեցու կառուցումից հետո և կառուցվել ու ավարտին հասցվել 1261 թվականին²:

Հուշարձանը հետապոտոդները բոլորն անվերապահորեն այն դասել են հայ ճարտարվեստի լավագույն ստեղծագործությունների շարքը (Վ. Օրբելի, Ա. Յակոբսոն, Ս. Բարխուդարյան, Ս. Մնացականյան, Բ. Ուլուբաբյան):

Ստորև դիտարկվող վիմագիրը, որը մինչև այսօր անհայտ է մնացել և չի հրապարակվել

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 270: Արձանագրությունը տես Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1982, պր. 5, էջ 38:

² Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1982, պր. 5, էջ 37 և 40:

հուշարձանը ուսումնասիրողների և վիմագիրների կողմից³, վերջերս հայտնաբերեցինք վանքի չափագրության ընթացքում: Այն գտնվում է տաճարի արևմտյան խաչաթևի թաղի շարվածքի քարերից մեկի վրա (հյուսիսային մասի քիվից հաշված 10-րդ շարք): Գրված է խոշոր տառերով:

Արձանագրությունը հիմնականում լուսավորվել է տաճարի արևմտյան պատից բացվող լուսամուտից, որը փակվել է գավիթը տաճարին կցելու հետևանքով, և թաղի մեկ հետաքրքրող մասը մնացել է կիսախավարում. վատ տեսանելիության պատճառով աննկատելի է մնացել:

Հաշվարկները ցույց են տալիս, որ մինչև գավթի կառուցումը, մուտքի առաջամասում գտնվող դիտողը որոշակի միջակայքից կարող էր տեսնել վիմագիրը: Հավանաբար ճարտարապետը դա հաշվի է առել քարը տեղադրելիս:


Վիմագիր քարի կենտրոնում քանդակված է

³ Ս. Ջալալյան, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, հ. Ա, Տփսիս, 1842, էջ 183—192: Վ. Շահխաթունեանց, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842 թ., հ. 2, էջ 371—376: Ս. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 173—179: Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1982, պր. 5, էջ 37—73: Բ. Ուլուբաբյան, Գանձասար, Երևան, 1981, էջ 87—166:

առյուծի գեղեցիկ ու արտահայտիչ դիմաքանդակ, որից ձախ կարդացվում է (ՔԱ), իսկ աջ՝ (ՐԻՄ) տառակապակցությունները, որ միասին կարդալիս կունենանք ՔԱՐԻՄ հատուկ անունը⁴:

Պետք է ենթադրել, որ Գանձասարի դիտարկվող դիմաքանդակը Քարին անձնավորության խորհրդանշանն է, իսկ քարի վրայի ամբողջ պատկերը՝ իր ստորագրությունը:

Պատմական աղբյուրներում և վիմական



Գանձասարի վանքի նորահայտ արձանագրությունը

Բառը և դիմաքանդակը կատարված են հարթաքանդակի սկզբունքով և ընկալվում են որպես մի ամբողջություն: Նրանց արտաքին մակերեսները համընկնում են թաղի հարթության հետ: Առյուծի քանդակը պատկերված է դիմացից: Արտահայտիչ են ջրջանաձև աչքերը և մազերի օղակաձև գանգուրները:

Հին քրիստոնեական հուշարձաններում առյուծները հաճախ մարմնավորել են հղորդ և զոհն պահապանների, հանդիսանալով արիության, քաջության, անվեհերության խորհրդանշան⁵:

⁴ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, էջ 217:

⁵ Н. А. Аладашвили, Монументальная скульптура Грузии, Москва, 1977, с. 219. Г. К. Вагнер, Скульптура Владимиро-Суздальской Руси, ст. 109—110.

արձանագրություններում կան այդ անվան այլ հիշատակություններ, որոնք վերաբերում են ԺԱ, ԺԵ, ԺԶ դարերին⁶, հետևաբար չեն ներկայացնում նույն անձը:

Խոշոր տառերով գրված և առանձին անվան ձևով արձանագրություններ հանդիպում են հայկական մի շարք հուշարձաններում (Զվարթնոց, Ավան, Զրվեժ, Պտղնի, Գառնահովիտ)⁷:

Ա. Ա. Մանուչարյանը իր մի հոդվածում⁸ ցույց է տալիս, որ այս տիպի արձանագրությունները բարերարների կամ եկեղեցու ծառայողների անուններ համարել չի կարելի և

⁶ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, էջ 217:



⁷ Ա. Ա. Մանուչարյան, Արձանագրման մի ավանդական ձևի մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 1970, № 6, էջ 71—74:

⁸ Նույն տեղում:

ոչ էլ դրանք պաշտոնական մարդկանց անուններ են: Հիշատակությունը արվում է կատարված գործի համար և դրանք կարող էին միայն ճարտարապետներ-վարպետներ լինել:

Ճարի ճարտարապետը Քարիմն է, որը նոր անուն է և կարող է դասվել հայ հանձարեղ ճարտարապետների շարքին:

Հաշվի առնելով, որ տաճարը և գավիթը կառուցվել են 1216—1261 թվականների ըն-



«Եթե նկատի առնենք քարագործ վարպետների նշանների ավանդական երևույթը, ճարտարապետի անվան ամբողջական գրառման նախապատվությունը միանգամայն բնական պետք է համարել»⁹:

Այսպիսով պարզ է դառնում, որ Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ տա-

թացքում (45 տարի), որը բավարար ժամանակահատված է մի մարդու ստեղծագործական գործունեության համար, հնարավոր ենք համարում, որ գավիթը ևս լինի նույն ճարտարապետի ձեռքի գործը: Այս ենթադրությունը կարող է հաստատվել տաճարի և գավթի ճարտարապետական առանձնահատկությունների մանրամասն քննությունից հետո:

⁹ Նույն տեղում, էջ 73:

